ՄԱՍԿՈՒԼԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԵՄԻՆԻՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՄԱՆԱՆԱ ԵՆՈՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի օգնական,
ուսումնական մասի առաջատար մասնագետ
manana.yenokyan@isec.am

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-71

Համառոտագիր

Գենդերի և սեռի վերաբերյալ հարցերը գիտական և հասարակական շրջանակներում շարունակում են մնալ արդիական՝ պայմանավորված գենդերային ինքնության, սոցիալական դերերի և մշակութային ընկալումների փոխակերպումներով:

Մասկուլինությունը և ֆեմինինությունը ներքին և արտաքին բնութագրերի միասնություն են, որոնք փոփոխական են տարածության և ժամանակի մեջ և գտնվում են հասարակության և որոշակի ժամանակաշրջանի աշխարհայացքի ազդեցության ներքո: Մասկուլինություն և ֆեմինինություն հասկացությունները ձևավորում են գենդերային ինքնությունն ու անմիջականորեն կապվում են անձի ինքնաընկալման և հասարակական դերերի հետ: Գիտական հետազոտություններում առանձնացվում են մասկուլինության և ֆեմինինության մի շարք մոտեցումներ, ինչպիսիք են՝ կենսաէվոլյուցիոն, հոգեդինամիկ և հետմոդեռնիստական մոտեցումները: «Մասկուլինություն» և «Ֆեմինինություն» հասկացություններն արտահայտում են նորմատիվ գաղափարներ և վերաբերմունք այն մասին, թե ինչպիսին պետք է լինի և, հետևաբար, ինչ պետք է սպասել տղամարդուց և կնոջից տվյալ հասարակությունում: Դրանք սահմանում են մեր գենդերային ինքնությունը և անմիջականորեն կապված են մեր և ուրիշների մասին պատկերացումների հետ:

Այս հոդվածը վերլուծում է մասկուլինության և ֆեմինինության առանձնահատկությունները սոցիալ–մշակութային համատեքստում՝ ընդգծելով դրանց ձևավորման բազմաշերտ բնույթը:

Պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ սոցիալ–մշակութային, տնտեսական ազդեցություններով, գիտատեխնիկական առաջընթացով, պատրիարխալ տիպի ընտանեկան մոդելից անցմամբ դեպի «միջուկային» մոդելի և ժամանակակից հասարակության մեջ կնոջ դերի և կարգավիճակի ընկալման փոփոխմամբ՝ վերափոխվեցին նաև մասկուլինության և ֆեմինինության վերաբերյալ պատկերացումները: Մասնավորապես՝ այն հանգեցրեց ընտանեկան դերերի փոփոխման, հոր կերպարի վերաիմաստավորման՝ հուզական ներգրավվածության շեշտադրման, կանանց ներգրավվածության աճի՝ ղեկավար պաշտոններում և հասարակական կյանքում, գենդերային ընկալման և դաստիարակության նոր ոճերի

ձևավորման: Զարգացած հասարակությունը, կրթական մակարդակի բարձրացումը և սոցիալական շարժումների ազդեցությունը նպաստում են գենդերային ավելի հավասարակշռված մոտեցումների ձևավորմանը: Ներկայումս մասկուլինությունը և ֆեմինինությունը դիտվում են որպես սոցիալապես կառուցված և առավել հարմարվողական բնութագրեր, այլ ոչ թե բացառապես կենսաբանորեն պայմանավորված: Այս տեղաշարժերը նպաստում են ժամանակակից հասարակությունում անձի ազատությանը և ներառականությանը: Վերջիններս էլ առողջ և գիտակից հասարակության ձևավորման կարևոր նախադրյալներ են:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ գենդեր, սեռ, մասկուլինություն, ֆեմինինություն, ինքնություն, մշակույթ, հասարակություն, արժեքներ, կարծրատիպեր:

CHARACTERISTIC FEATURES OF MASCULINITY AND FEMININITY IN A SOCIO-CULTURAL CONTEXT

MANANA YENOKYAN

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the RA Assistant to the Deputy Director of Scientific Research, Leading Specialist at the Educational Department

manana.yenokyan@isec.am

Abstract

Gender and sex issues continue to be relevant in scientific and public circles due to the transformations of gender identity, social roles, and cultural perceptions.

Masculinity and femininity are a combination of internal and external characteristics that vary across space and time, influenced by the worldview of a given society and historical period. The concepts of masculinity and femininity shape gender identity and are directly related to a person's self-perception and social roles. Scientific research distinguishes several approaches to masculinity and femininity, including bio-evolutionary, psychodynamic, and postmodern perspectives. The concepts of "masculinity" and "femininity" reflect normative ideas and attitudes about what a man and a woman should be like and, consequently, what should be expected of them in a given society. These concepts define our gender identity and are directly related to our perceptions of ourselves and others.

This article analyses the features of masculinity and femininity in a socio-cultural context, highlighting the multilayered nature of their formation.

Due to the socio-cultural and economic influences characteristic of a given period, as well as scientific and technological advancements, the transition from the patriarchal family model to the "nuclear" model, and the changing perception of the role and status of women in modern society, have led to transformations in the concepts of masculinity and femininity. In particular, this led to a transformation of family roles, the reconceptualisation of the father's role with an emphasis on emotional involvement, an increase in women's involvement in leadership positions

and public life, and the formation of new gender perceptions and upbringing styles. A developed society, increased academic levels, and the influence of social movements contribute to the development of more balanced approaches to gender. Currently, masculinity and femininity are viewed as socially constructed and more adaptive characteristics, rather than exclusively biologically determined. These shifts contribute to the individual's freedom and inclusion in modern society, which are essential prerequisites to forming a healthy and conscious society.

Keywords and phrases: Gender, sex, masculinity, femininity, identity, culture, society, values, stereotypes.

ОСОБЕННОСТИ ХАРАКТЕРИСТИКИ МАСКУЛИННОСТИ И ФЕМИННОСТИ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОМ КОНТЕКСТЕ

МАНАНА ЕНОКЯН

Ассистент заместителя директора по научно-исследовательским вопросам,
ведущий специалист учебной части
Международного научно-образовательного центра НАН РА
manana.yenokyan@isec.am

Аннотация

Вопросы гендера и пола продолжают оставаться актуальными в научных и общественных кругах в связи с трансформациями гендерной идентичности, социальных ролей и культурных представлений.

Маскулинность и феминность представляют собой сочетание внутренних и внешних характеристик, которые варьируются в зависимости от времени и пространства и зависят от мировоззрения конкретного общества и исторического периода. Понятия маскулинности и феминности формируют гендерную идентичность и напрямую связаны с самовосприятием человека и его социальными ролями. Научные исследования выделяют ряд подходов к изучению маскулинности и феминности, таких как биоэволюционный, психодинамический и постмодернистский подходы. Понятия «маскулинность» и «феминность» отражают нормативные представления и установки о том, каким должен быть мужчина и какой должна быть женщина, а следовательно — чего от них следует ожидать в данном обществе. Эти понятия определяют нашу гендерную идентичность и напрямую связаны с нашим восприятием себя и других.

В статье анализируются особенности маскулинности и феминности в социокультурном контексте, подчеркивая многослойную природу их формирования.

Под влиянием социокультурных и экономических факторов, характерных для определенного исторического периода, научно-технического прогресса, перехода от патриархальной модели семьи к «нуклеарной» модели, а также изменения восприятия роли и статуса женщины в современном обществе трансформировались также понятия маскулинности и фемининности. В

частности, это привело к трансформации семейных ролей, переосмыслению роли отца с акцентом на эмоциональную вовлеченность, росту участия женщин в руководящих позициях и общественной жизни, а также формированию новых гендерных представлений и стилей воспитания. Развитое общество, повышение уровня образования и влияние социальных движений способствуют формированию более сбалансированных подходов к гендеру. В настоящее время маскулинность и феминность рассматриваются как социально сконструированные и более адаптивные характеристики, а не исключительно биологически обусловленные. Эти изменения способствуют свободе личности и её включённости в современное общество, что является важной предпосылкой формирования здорового и осознанного социума.

Ключевые слова: гендер, пол, маскулинность и феминность, идентичность, культура, социум, ценности, стереотипы.

Ներածություն

Մարդու սեռային ինքնության ձևավորումը բարդ գործընթաց է, որը ներառում է կենսաբանական, հոգեբանական և սոցիալ-մշակութային բաղադրիչներ: Այս համատեքստում շատ կարևոր է տարբերակել «սեռ» և «գենդեր» հասկացությունները: Սեռը կենսաբանական հասկացություն է. ծնվելիս անձը պայմանավորված է որևէ սեռով՝ իգական կամ արական՝ ելնելով մեր կենսաբանական բնութագրերից (ներքին/արտաքին սեռական օրգաններ, քրոմոսոմային համակազմ, հորմոնալ ֆոն): Գենդերը սոցիալական հասկացություն է. նշանակված սեռի հիման վրա (տղամարդ/կին): «Գենդեր» եզրույթը վերաբերում է այն սոցիալական սպասումներին, որոնք կապված են արական և իգական սեռերի հետ: «Մասկուլինությունը» տերմինը վերաբերում է այն դերերին, վարքագծին և հատկանիշներին, որոնք հարմար են համարվում տվյալ հասարակության արական սեռի համար: «Ֆեմինինություն» տերմինը վերաբերում է հասարակության պատկերացումների այն դերերին, վարքագծային մոդելներին և հատկանիշներին, որոնք հարմար են համարվում իգական սեռի համար **[20]:** Մասկուլինության և ֆեմինինության ընկալումը տարբեր հասարակություններում պայմանավորված է սոցիալ-մշակութային գործոններով, որոնք ենթարկվում են փոփոխությունների ժամանակի ընթացքում: Սույն աշխատանքի նպատակն է՝ բացահայտել մասկուլինության և ֆեմինինության բնութագրական առանձնահատկությունները սոցիալ-մշակութային համատեքստում:

Տղամարդկանց և կանանց բնորոշ որոշ գծեր ունեն իրենց էվոլյուցիոն, գենետիկական և ֆիզիոլոգիական հիմքերը և նախադրյալները: Օրինակ՝ ագրեսիվության և գերակայության մակարդակը փոխպայմանավորված է տղամարդկանց սեռական հորմոնների՝ անդրոգենների մակարդակի հետ: Մի շարք հատկություններ էլ ձևավորվում են սոցիալականացման, կրթության և անձնային զարգացման գործընթացում: Պատահական չէ, որ կան մասկուլին և ֆեմինին սոցիալական կարծրատիպեր: Դասական բնութագրմամբ մասկուլին գծերը ներառում են անկախություն, ինքնավստահություն, գերակայություն, ագրեսիվություն, ռիսկի դիմելու հակում, անկախություն, ինքնավստահություն, իսկ ֆեմինին հատկություններն ավանդաբար ներառում են նրբանկատություն, զգայունություն, ամաչկոտություն, քնքշություն, սրտացավություն, համակրանքի

ունակություն, կարեկցանք: Նրանք մեծ ուշադրություն են դարձնում հուզական ասպեկտներին **[18]:** «Մասկուլինություն» և «Ֆեմինինություն» հասկացություններն արտահայտում են նորմատիվ գաղափարներ և վերաբերմունք այն մասին, թե ինչպիսին պետք է լինի և, հետևաբար, ինչ պետք է սպասել տղամարդուց և կնոջից տվյալ հասարակությունում: Դրանք սահմանում են մեր գենդերային ինքնությունը և անմիջականորեն կապված են մեր և ուրիշների մասին պատկերացումների հետ **[19]:** Որպես նույնականության տեսակներ՝ մասկուլինությունը և ֆեմինինությունը արտահայտվում են անձի արժեքային կողմնորոշումների, ուղղվածության, սեռադերային վերաբերմունքի, հոգեբանական հարաբերությունների տեսքով: Ընդհանրացնելով կարելի է նշել, որ մասկուլինությունը և ֆեմինինությունը ներքին և արտաքին բնութագրերի միասնություն են, որոնք փոփոխական են տարածության և ժամանակի մեջ և գտնվում են հասարակության և որոշակի դարաշրջանի աշխարհայացքի ազդեցության տակ **[1]:**

Տեսամեթոդական հիմքեր

Աշխատանքը հիմնված է բազմաբնույթ գիտական մոտեցումների վրա՝ ներառյալ սոցիալ-կառուցվածքային, կենսաէվոլյուցիոն, հոգեդինամիկ և հետմոդեռնիստական տեսությունները: Հոդվածում կիրառվել են նաև գենդերային ինքնության ձևավորման վերաբերյալ հոգեվերլուծական, ճանաչողական զարգացման և սոցիալական ուսուցման տեսությունները: Որպես տեսամեթոդական հիմք են հանդիսացել նաև Ս. Բեմի, Ե. Միդի, Ջ. Սպենսի, Ջ. Մորավսկիի գենդերային ինքնության, Ա. Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսության, ինչպես նաև Վ. Գեոդակյանի՝ էվոլյուցիոն կենսաբանության վերաբերյալ աշխատությունները:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ որակական մեթոդներով՝

• *Վերլուծական-համադրական մեթոդ,* որը կիրառվել է մասկուլինության և ֆեմինինության տարբեր մոտեցումների ուսումնասիրության համար:

• *Համեմատական մեթոդ,* որն օգտագործվել է պատմական տարբեր ժամանակահատվածներում գենդերային ընկալումների փոփոխությունները պարզելու համար:

• *Տեսական վերլուծություն*, որը ներառում է տարբեր մշակույթներում մասկուլինության և ֆեմինինության դրսևորումների վերլուծում՝ հիմնվելով հոգեբանական, սոցիոլոգիական և մարդաբանական աղբյուրների վրա:

Այս մեթոդների կիրառումը հնարավորություն է տվել վերլուծելու մասկուլինության և ֆեմինինության փոփոխական բնույթը՝ կախված պատմական, սոցիալական ու մշակութային գործոններից:

Վերլուծություն

Հին առասպելաբանությունն ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ տղամարդը ներկայացվում է որպես ակտիվ, սոցիալապես ստեղծագործ սկիզբ, իսկ կինը՝ որպես պասիվ բնական ուժ:

Հին չինական դիցաբանության մեջ «Ին»-ը կանացի սկիզբը և տղամարդու «Յան»-ը բևեռային տիեզերական ուժեր են, որոնց փոխազդեցությունը հնարավոր է դարձնում տիեզերքի անսահման գոյությունը: «Ին» բառը, որը սովորաբար

նշանակում է առաջին, խորհրդանշում է խավարը, ցուրտը, խոնավությունը, փափկությունը, պասիվությունը, ճկունությունը, իսկ «Յանը»՝ լույս, չորություն, կարծրություն, ակտիվություն: Տարբեր հասարակություններում վերագրվող գենդերային գծերի բևեռացման աստիճանը նույնը չէ: Չնայած մասկուլինությունը, սովորաբար, կապված է գործիքակազմության (արդյունավետություն, պրագմատիզմ, արտաքին կողմնորոշում), անկախության և ագրեսիվության հետ, իսկ ֆեմինինությունը՝ արտահայտչականության (հուզականություն, զգայունություն և այլն) և նրբանկատության հետ, տարբեր մշակույթներն այս առումով անհամեմատ տարբեր են թվում՝ թույլ տալով մարդաբաններին խոսել «մասկուլին» և «ֆեմինին» մշակույթների մասին: Հոլանդացի մարդաբան Գերտ Հոֆստեդեն (1998) էմպիրիկորեն համեմատել է տարբեր մշակույթների մարդկանց բնորոշ արժեքային կողմնորոշումները մի քանի հիմքերով՝ ներառյալ մասկուլինությունն ու ֆեմինինությունը: Մասկուլին մշակույթների առաջնային արժեքային կողմնորոշումներն առանձնանում են անձնական նվաճումների բարձր գնահատմամբ, բարձր սոցիալական կարգավիճակը համարվում է անձնական հաջողության գրավական, երեխաներին սովորեցնում են հիանալ ուժեղով, պարտվողներից խուսափում են: Ի տարբերություն վերջինիս, ֆեմինին մշակույթների առաջնային արժեքային կողմնորոշումները կարևորում են համաձայնության անհրաժեշտությունը. այստեղ գնահատվում է այլոց նկատմամբ հոգատարությունը, հարգանքը մարդկանց զգացմունքների նկատմամբ, համակրանք ճնշվածների նկատմամբ, խոնարհությունը բարձր է գնահատվում, մտածողությունն ավելի ինտուիտիվ է: Այնուամենայնիվ, այս փոխաբերությունները ոչ թե «իրական» մասկուլին և ֆեմինին որակների արտացոլումն են, այլ, այսպես կոչված, երկուական հակադրությունների երկար շարք՝ երջանկություն – դժբախտություն, կյանք – մահ, աջ – ձախ, վերև – ներքև, երկինք – երկիր, ցերեկ – գիշեր, արև – լուսին, լույս – մութ **[9, 17]:**

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ մշակույթի արժեքային կողմնորոշումները հոմանիշ չեն տղամարդկանց և կանանց անհատական բնութագրերի և առանձնահատկությունների հետ:

Անցյալ դարի վերջին Ռուսաստանում քաղաքական և սոցիալական վերափոխումների արդյունքում առաջացած սոցիալ–տնտեսական ճգնաժամը սրեց տղամարդկանց և կանանց ինքնանույնացման հետ կապված խնդիրները: Այս առումով, ստեղծված իրավիճակը հստակորեն ընդգծում է տարբեր փուլերում տղամարդկանց և կանանց գենդերային ինքնության ձևավորման գործընթացը հասկանալու անհրաժեշտությունը: Գենդերային ինքնությունը ներքին դինամիկ կառույց է, որը միավորում է անձի անհատական ասպեկտները՝ կապված իրազեկվածության, անձի՝ որպես որոշակի սեռի ներկայացուցչի փորձառության և իր սեռային դերի, վարքի ինքնակարգավորման հետ: Գենդերային ինքնության կառուցվածքային բաղադրիչները՝ ճանաչողական, հուզական և վարքային բաղադրիչներ են, որոնք ձևավորվում են անհատական զարգացման տարբեր փուլերում: Արական և իգական սեռի ինքնության ձևավորման գործընթացը ներառում է համապատասխան գենդերային դեր ունենալու գործընթաց՝ համապատասխանելով տվյալ հասարակության մշակութային նորմերին և սովորույթներին: Մշակութային մակարդակում սեռային դերերը գոյություն ունեն սեռական խորհրդանիշների և՛ ֆեմինին և՛ մասկուլին կարծրատիպերի որոշակի համակարգի համատեքստում **[5]:**

Գիտության մեջ առանձնացնում են մասկուլինության և ֆեմինինության վերաբերյալ մի քանի մոտեցումներ.

1. *Հոգեդինամիկ մոտեցում*– կենսաբանական առանձնահատկություններն արդիականանում են անձի անհատական զարգացման գործընթացում՝ հասարակական հարաբերությունների և նորմերի ազդեցության ներքո, որոնք պետք է համապատասխանեն սեռերի կենսաբանական էությանը:
2. *Կենսաէվոլյուցիոն մոտեցում*– գենդերային նույնականության դիտարկման պարագայում որպես հիմք է վերցնում գենդերային վարքի կենսաբանական բաղադրիչը և գենետիկական կանխորոշվածությունը: Մասկուլին և ֆեմինին կերպարների միջև տարբերությունները հանդես են գալիս որպես անհատի կենսաբանորեն պայմանավորված առանձնահատկություններ: Հետևաբար՝ մասկուլինության հիմք է համարվում ագրեսիվությունը, իշխելու ձգտումը և դեպի դուրս ուղղված գործունեության հակումը, իսկ ֆեմինինության հիմք՝ սերնդի շարունակման բնազդը, պասիվությունը և ուրիշների մասին հոգ տանելը **[6, 7]:**
3. *Հետմոդեռնիստական մոտեցում*– շրջանակներում տվյալ հասկացություն-ները դիտարկվում են ոչ թե որպես արդյունք, այլ որպես գործընթաց: Հետևաբար, մասկուլինությունը և ֆեմինինությունը՝ ոչ թե որոշակի գծերի ամբողջություն է, այլ սուբյեկտների փոխներգործության բնութագիր **[4, էջ 177]:**

Կան առնվազն երեք հիմնական տեսություններ, որոնք բացատրում են ֆեմինինության և մասկուլինության զարգացումը.

1. *Հոգեվերլուծական տեսություն*–անհատի գենդերային ինքնությունը ձևավոր-վում է նույն սեռի ծնողի հետ նույնականացման միջոցով: Այս նույնակա-նացումը առաջանում է ֆրոյդյան հոգեսեքսուալ զարգացման էդիպյան փուլի ներքին կոնֆլիկտից: Մոտ 3 տարեկանում երեխան ձևավորում է ուժեղ սեռական կապվածություն հակառակ սեռի ծնողի նկատմամբ: Միաժամանակ, նրա մոտ ի հայտ են գալիս բացասական զգացումներ նույն սեռի ծնողի նկատմամբ, որոնք հիմնված են նաև նախանձի վրա: Մոտ 6 տարեկանում երեխան հոգեբանական այս հակասությունը լուծում է՝ հրաժարվելով հակառակ սեռի ծնողի հանդեպ ունեցած ցանկություններից և նույնականանալով իր սեռին համապատասխան ծնողի հետ: Այսպիսով՝ տղաները մասկուլինություն են սովորում իրենց հայրերից, իսկ աղջիկները՝ ֆեմինինություն իրենց մայրերից: Հոգեվերլուծական տեսության ավելի նոր ձևակերպումը ենթադրում է, որ մայրերը կարևոր դեր են խաղում գենդերային ինքնության ձևավորման գործում:
2. *Ճանաչողական-զարգացման տեսություն* – կան կարևոր իրադարձություն-ներ, որոնք երկարատև ազդեցություն են թողնում գենդերային ինքնության ձևավորման վրա, սակայն դրանք ունեն ավելի շուտ ճանաչողական քան հոգեսեքսուալ ծագում: Ըստ այս տեսության՝ գենդերային ինքնության զարգացումը նախորդում է, այլ ոչ թե հետևում նույն սեռի ծնողի հետ նույնականացմանը: Երբ երեխայի գենդերային ինքնությունն ամրապնդվում է, անձը մոտիվացվում է՝ դրսևորելու գենդերին համապատասխանող վերաբերմունք և վարքագիծ՝ շատ ավելի վաղ,

քան նույն սեռի մոդելավորումը սկսում է իր ազդեցությունը: Նույն սեռի մոդելավորումը պարզապես նպաստում է գործընթացի առաջընթացին:

3. *Սոցիալական ուսուցման տեսություն* – երեխայի սոցիալական միջավայրն՝ ինչպիսին են՝ ծնողները և ուսուցիչները, ձևավորում են նրա գենդերային ինքնությունը: Այս դեպքում ծնողը կամ ուսուցիչը երեխային ուղղակիորեն սովորեցնում է կանացիություն և տղամարդկայնություն՝ խրախուսումների և պատիժների միջոցով կամ անուղղակիորեն՝ որպես մոդել, որը երեխան ընդօրինակում է: Ուղղակի խրախուսումները կամ պատիժները հաճախ տրվում են արտաքին տեսքի համար, օրինակ՝ հագուստի ընտրության (աղջիկները՝ զգեստ, տղաները՝ տաբատ), իրերի նախընտրության (աղջիկ-ների համար տիկնիկներ, տղաների համար բեռնատարներ) և վարքագծի համար (աղջիկների մոտ՝ պասիվություն և կախվածություն, տղաների մոտ՝ ագրեսիվություն և ինքնուրույնություն): Խրախուսումների և պատիժների միջոցով երեխաները սովորում են համապատասխան արտաքին տեսք և վարքագիծ: Գենդերային ինքնության անուղղակի ուսուցումը տեղի է ունենում նույն սեռի ծնողների, ուսուցիչների, հասակակիցների կամ մեդիայում առկա նույն սեռի մոդելների ընդօրինակման միջոցով: Երեխան ընդօրինակում է այն մոդելի մտքերը, զգացմունքները կամ վարքագիծը, որը խրախուսում է ստացել, քանի որ ակնկալում է ստանալ նույնպիսի խրախուսում **[15]:**

Սոցիալական միջավայրում ակներև են գենդերային տարբերությունների դրսևորումները՝ մանկական տարիքում առաջատար գործունեություն հանդի-սացող խաղի միջոցով, որոնք տղաներին և աղջիկներին ուղղակի և անուղղակի սովորեցնում են դերեր, վարքագծային մոդելներ և հատկանիշներ, այնուհետև այս ցիկլը շարունակվում է կյանքի հաջորդիվ պարբերաշրջաններին բնորոշ առաջատար գործունեության ձևերում՝ ընտանիքում, դպրոցում, ընկերության մեջ, տարբեր հարաբերություններ կառուցելիս, աշխատանքում: Այստեղ հատկապես տեղին է հիշել սոցիալական հոգեբանության ամենաազդեցիկ տեսաբաններից մեկի՝ Ա. Բանդուրայի հայեցակարգը սոցիալական ուսուցման վերաբերյալ: Այս տեսության համաձայն մարդիկ սովորում են ոչ միայն ուղղակի փորձի, այլ նաև դիտարկման, մոդելավորման և ընդօրինակման միջոցով: Շատ կարևոր է շեշտադրել անձի զարգացման գործընթացում նշանակալից անձինք հանդիսացող մարդկանց (սովորաբար ծնողները, այնուհետև ուսուցիչները) առողջ և գրագետ մոտեցմանը:

Միդի ուսումնասիրությունը ստիպեց մարդկանց վերանայել ֆեմինի-նության և մասկուլինության վերաբերյալ պատկերացումները: Սեռի հետ կապված տարբեր հատկանիշներ, խառնվածք, դերեր և ինքնություններ այլևս չէին կարող անքակտելիորեն կապված լինել կենսաբանական սեռի հետ: Միդի ուսումնասիրությունից ի վեր, ժառանգականություն-դաստիարակություն խնդիրը լայնորեն ուսումնասիրվել է, բայց դեռևս հստակ եզրակացություններ չկան **[10, 13]:** Շատերը գենդերային հատկությունները համարում են միանշանակ, անքակտելիորեն կապված գենդերային ինքնության հետ. եթե կինը պասիվ է և քնքուշ, ապա նա այդպես կլինի բոլոր դերերում և իրավիճակներում: Բայց տղամարդիկ և կանայք միմյանց հետ հաղորդակցվում են ոչ թե վակումային, այլ որոշակի սոցիալական դերերում և տարբերակման բնույթը գործունեության տարբեր ոլորտներում, օրինակ՝ արտադրական ոլորտում և ընտանիքում

նույնը չէ: Այս երևույթի շեշտադրումը կարևոր է, քանի որ այն հաճախ սխալ կարծրատիպային բնույթ է կրում և թյուրըմբռնում առաջացնում:

Նշանակալից են նաև էվոլյուցիոն կենսաբանության ոլորտում կատարված ուսումնասիրությունները: Ըստ Վ. Գեոդակյանի տեսության՝ ցանկացած կենսաբանական համակարգի ինքնավերարտադրման գործընթաց ներառում է երկու հակադիր միտումներ.

• ժառանգականություն, որը պահպանողական գործոն է և ձգտում է անփոփոխ պահել ծնողների բոլոր հատկությունները սերունդների մեջ,

• փոփոխականություն, որի շնորհիվ առաջանում են նոր գծեր:

Իգական սեռի ներկայացուցիչները մարմնավորում են մշտական «հիշողություն», իսկ արական սեռի ներկայացուցիչները՝ տեսակների գործառական, ժամանակավոր «հիշողություն»: Ֆիլոգենեզում արական սեռը մեծ դեր է խաղում փոփոխության համար, իսկ իգականը՝ սերնդապահպանման գործում: Օնտոգենեզում ընդհակառակն է, տղամարդիկ ավելի կոշտ և անկախ են շրջակա միջավայրից, իսկ կանայք՝ ավելի փոփոխական, ճկուն և ավելի հարմարվողական են ադապտացիայի առումով: Իգական սեռի ռեակցիայի արագությունը, նրանց հարմարվողականությունը որոշ բնութագրերով մի փոքր ավելի լայն են, քան տղամարդկանց մոտ: Շրջակա միջավայրի միևնույն վնասակար գործոնը փոփոխում է կանանց ֆենոտիպը՝ առանց գենոտիպի վրա ազդելու, մինչդեռ տղամարդկանց մոտ այն ոչնչացնում է ոչ միայն ֆենոտիպը, այլև գենոտիպը: Ռեակցիայի տարբեր տեմպերի շնորհիվ կանայք ունեն ավելի բարձր ուսանելու, յուրացնելու ունակություն, դաստիարակություն, կոնֆորմիզմ, իսկ տղամարդիկ՝ ավելի զարգացած հնարամտություն: Հետևաբար, նոր խնդիրները տղամարդիկ ավելի լավ են լուծում, իսկ ծանոթ խնդիրները, ընդհակառակը, հեշտությամբ լուծում են կանայք **[3]:**

Կենսաբանորեն ապացուցված է սեռի շատ խորը տարբերությունների առկայությունը օրգանիզմի զարգացման և գործունեության բոլոր մակարդակ-ներում, սակայն նրա բոլոր հատկությունների բաժանումը արական (մասկուլին) և իգական (ֆեմինին) ըստ «կամ-կամ» սկզբունքի անհնար է: Այլընտրանքային, միմյանց բացառող հատկությունների հետ միասին կան շատ հատկություններ, որոնք հավասարապես բնորոշ են երկու սեռերին: Սոցիալական դերերը հավասարապես բաշխված չեն տարբեր հասարակություններում, տղամարդկանց և կանանց ոչ բոլոր հատկություններն են կախված սեռից և նույնիսկ, եթե այդպիսի բան գոյություն ունի, ապա այն միջնորդավորվում և էապես փոփոխ-վում է շրջակա միջավայրի պայմանների, դաստիարակության և մի շարք սոցիալական ազդեցությունների արդյունքում:

Մասկուլին և ֆեմինին կերպարների վերաբերյալ գաղափարական ձևավորումը և դրանց չափումը տղամարդկանց ու կանանց մոտ սկիզբ է առել Լյուիս Տերմանի և Քեթրին Քոքս Մայլսի աշխատանքներում **[16]:** Նրանք ստեղծեցին 455 հարցից բաղկացած հարցարան, որը հայտնաբերում էր մասկուլինության և ֆեմինինության արտահայտվածության աստիճանը: Այն անվանեցին «Կեցվածքի և հետաքրքրությունների վերլուծության» (Attitude Interest Analysis Test (AIST)) հարցարան՝ վերջինիս իրական նպատակը փորձարկվողներից թաքցնելու համար: Հարցարանը ներառում էր այնպիսի տարրեր, ինչպիսիք են հետաքրքրությունների վերաբերյալ հարցերը, բառային ասոցիացիաները, թանաքաբիծ ասոցիացիաները, և ներհայեցողականություն-

արտահայտեցողականություն չափումները **[15]:** 1970-ականներին զարգացան երեք հիմնական քննադատություններ մասկուլինության ու ֆեմինինության վերաբերյալ առկա մոտեցումների վերաբերյալ.

1) Մ-Ֆ սանդղակները չափազանցնում էին տղամարդկանց և կանանց միջև տարբերությունները:

2) Մ-Ֆ սանդղակներում ֆեմինին բնութագրերը հաճախ ունենում էին բացասական ենթատեքստ:

3) Մասկուլինության ու ֆեմինինության երկբևեռ հայեցակարգը համարվեց խնդրահարույց, այսինքն՝ մարդը կարող էր լինել կամ մասկուլին կամ ֆեմինին, բայց՝ ոչ երկուսը միաժամանակ:

Քննադատության արդյունքում ձևավորվեց անդրոգինիայի հայեցակարգը և դրա գնահատման սանդղակները **[11]:** 1974 թ-ին Ս. Բեմը ձևակերպել է տարբեր գենդերային նույնականություն ունեցող մարդկանց երեք տիպերի գոյության մասին հայեցակարգը: Տվյալ տիպերին պատկանում են ֆեմինին բնութագրերի գերակշռությամբ, մասկուլին բնութագրերի գերակշռությամբ և անդրոգին բնութագրերի գերակշռությամբ մարդիկ **[2]:** Անդրոգինիան մասկուլինության ու ֆեմինինության համադրություն կամ հավասարակշռություն է: Այն հնարավորություն է տալիս, որ անհատներն արտահայտեն ինչպես ֆեմինին, այնպես էլ մասկուլին կողմերը **[15]:** Մյուս կողմից՝ Սպենսն առաջարկում է, որ գենդերային երևույթները բազմագործոնային են: Այս տեսանկյունից գոյություն ունեն բազմաթիվ հատկանիշներ և վարքագծային մոդելներ, որոնք մշակութային առումով տարբերակում են տղամարդկանց և կանանց, սակայն դրանք միավորված չեն որպես մեկ հիմնական հատկություն: Սպենսի համար կարևոր հիմնական կառուցվածքը գենդերային ինքնությունն է կամ անձի՝ իրեն մասկուլին կամ ֆեմինին զգալու ընկալումը: Մշակութային առումով սահմանված անձնային գծերը, ֆիզիկական հատկանիշները, ունակությունները և մասնագիտական նախասիրությունները, ինչպես նաև այլ գործոններ, յուրահատուկ և անհատական համակցությամբ նպաստում են մարդու գենդերային ինքնության ձևավորմանը **[12, 14, 15]:**

Այսպիսով՝ թեև հասարակության անդամները կարող են ընդհանուր համաձայնության գալ մասկուլինության և ֆեմինինության ներկայացման վերաբերյալ, այդուհանդերձ յուրաքանչյուրի մասկուլինությունն ու ֆեմինինությունն ավելի փոփոխական և յուրահատուկ են:

Վերջին տարիներին կատարված հետազոտությունները դուրս են բերել ժամանակակից մասկուլինության վերաբերյալ չորս հիմնական բնութագրական հասկացություններ, որոնք ակներև են ժամանակակից մասկուլին դրսևորումներում.

1. ներառականություն,
2. էմոցիոնալ մտերմություն,
3. ֆիզիկականություն,
4. դիմադրություն

Համադրված տվյալները ցույց են տալիս, որ արևմտյան մշակույթներում երիտասարդ, միջին խավի, հետերոսեքսուալ տղամարդիկ, պահպանելով որոշ ավանդական մասկուլին նորմեր, միաժամանակ որդեգրում են ժամանակակից մասկուլինության որոշ տարրեր: Ժամանակակից մասկուլինության տեսությունների ուսումնասիրողները ենթադրում են, որ սա մի շարք դրական

հետևանքներ ունի: Մյուսների, այդ թվում՝ տարբեր գենդերային և սեռական ինքնություն ունեցող մարդկանց ընդունումը նպաստում է բռնության նվազմանը: Կանանց հավասար ընդունումը օգնում է հաղթահարել տղամարդկանց և կանանց միջև գոյություն ունեցող անհավասար ուժային հարաբերությունները և նպաստում է գենդերային ավելի հավասարակշռված հասարակության ձևավորմանը **[8]:**

Ստորև աղյուսակում ներկայացված են ավանդական և ժամանակակից մասկուլինության և ֆեմինինության ընկալման որոշ առանցքային բնութագրեր:

Աղյուսակ 1

Ավանդական և ժամանակակից մասկուլինության և ֆեմինինության ընկալման առանձնահատկությունները

Ավանդական մասկուլինության ընկալում	**Ժամանակակից (փոփոխված) մասկուլինության ընկալում**
Պատմականորեն մասկուլինությունը կապված է այնպիսի գծերի հետ, ինչ-պիսիք են՝ առաջնորդությունը, հաստատակամությունը, անկախությունը, մրցակցային ոգին, ստոիցիզմը (զգացմունքային հսկողություն և ճկունություն սթրեսի ժամանակ), ուրիշներին պաշտպանելու և հոգալու բնազդը, մարտահրավերներին և անորոշությանը դիմակայելու պատրաստակամությունը, վճռականությունը, գործնականությունը, ֆիզիկական քաջությունը: Հետազոտությունները ցույց են տվել, թե ինչպես են այդ հատկանիշներն ամրապնդվել մշակութային նորմերով, լրատվամիջոցների ազդեցությամբ և ընտանեկան մոդելով:	Ժամանակակից հետազոտություններն ընդգծում են, որ մասկուլինությունը եզակի, միաձույլ հասկացություն չէ, այլ ձևավորվում է ռասսայի, մշակութային և սոցիալական գործոնների ազդեցությամբ: Մասկուլինությունը կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ սկսած հուզական բարձր դրսևորումներից մինչև ավանդական ստոիկ և հեղինակավոր ձևերով: Ժամանակակից մասկուլինությունը վերասահմանում է «տղամարդկային ուժի» գաղափարը: Հուզական ինտելեկտը, խոցելիությունը և մտավոր բարեկեցությունը այժմ համարվում են ուժեղ, քան թույլ կողմեր:
Ավանդական ֆեմինինության ընկալում	**Ժամանակակից (փոփոխված) ֆեմինինության ընկալում**
Ֆեմինինությունն ավանդաբար կապված է այնպիսի հատկությունների հետ, ինչպիսիք են ենթարկվողականությունը, հուզական արտահայտչականությունը, համեստությունը, ինտուիցիան, հարմարվողականությունը և կենցաղը, բանավոր հաղորդակցման զարգացած ընդունակությունը, էլեգանտությունը: Ինչպես մասկուլինությունը, այնպես էլ կանացիությունը խորապես ձևավորվել է մշակութային պատմություններով և հասարակության ակնկալիքներով, հատկապես այնպիսի դերերի շուրջ, ինչպիսիք են խնամքը և գեղեցկության չափանիշները:	Ժամանակակից ֆեմինինությունը բազմազան է ընկալվում: Կանայք ընդունում են նոր դերեր՝ մարտահրավեր նետելով ավանդական գենդերային դերերին դրսևորում այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են՝ առաջնորդությունը, անկախությունը և ինքնարտահայտումը: Ֆեմինիզմը վճռորոշ դեր է խաղացել այս սահմանները առաջ մղելու գործում՝ թույլ տալով կանանց վերասահմանել, թե ինչ է նշանակում լինել կանացի: Ժամանակակից ֆեմինինության կարևոր դրսևորումներից է նաև գեղեցկության չափանիշների մերժումը: Մասնավորապես՝ նկատելի պրոգրես դեպի մարմնի դրական վերաբերմունքը և ինքնընդունումը, այլ ոչ թե անիրատեսական իդեալներին համապատասխանելը:

Վերը նշված փոփոխություններին նպաստեցին նաև մշակութային գլոբալիզացիան և գիտատեխնիկական զարգացումը: Վերջին ժամանակաշրջանում ինտերնետային հասանելիությունը նպաստեց արևմուտքի մշակութային արժեքների, սովորույթների, նորմերի տարածմանը, փոխանցմանը, ներքնայնացմանը և համաշխարհային միտումների ձևավորմանը:

Նկատելի է, որ մասկուլինության և ֆեմինինության վերաբերյալ ժամանակակից ըմբռնումները գնալով ավելի ու ավելի են մարտահրավեր նետում բևեռացված մասկուլին և ֆեմինին ընկալմանը՝ ընդգրկելով հեղուկություն ու բազմազանություն: Վերը նշված փոփոխություններն առաջին հերթին հանգեցրին ընտանիքում կնոջ դերի ու կարգավիճակի և դրանցով պայմանավորված գործառույթների և պարտականությունների շրջանակի փոփոխմանը: Գրականության վերլուծության արդյունքում կարող ենք դուրս բերել մասկուլինության և ֆեմինինության ընկալման՝ փոփոխություններով պայմանավորված, ժամանակակից ընտանիքներում առկա փոփոխությունները.

1. Ընտանեկան դերերի փոփոխություն

Ժամանակակից շատ ընտանիքներում աշխատանքի բաժանումն ավելի ճկուն է դարձել: Տղամարդիկ ավելի հաճախ ներգրավվում են երեխայի խնամքի գործում, իսկ կանայք հաջողություններ են գրանցում մասնագիտական և աշխատանքային միջավայրերում: Երբ զույգերը կիսում են կենցաղային և ծնողական պարտականությունները, երկու զուգընկերներն էլ հակված են ավելի մեծ բավարարվածության և ավելի քիչ են ենթարկվում սթրեսի, թեև ավանդական գենդերային դերերը դեռևս ազդում են որոշ ընտանիքների դինամիկայի վրա:

2. Հոր կերպարի վերաիմաստավորում՝ հուզական ներգրավվածության շեշտադրում

Ժամանակակից ուսումնասիրությունները շեշտել են հոր կերպարի դերային փոփոխությունը: Տղամարդկանց կողմից երեխաների դաստիարակության գործում հուզական ներգրավվածության աճող ցուցանիշներ կան, ինչը զգալիորեն տարբերվում է նախորդ սերունդներում հոր դերի բնութագրիչներից, երբ հայրն առաջին հերթին դիտվում էր որպես ֆինանսական բարեկեցությունն ապահովող անձ:

3. Կանանց ներգրավվածության աճ ղեկավար պաշտոններում և հասարակական կյանքում

Վերջին տասնամյակներում նկատվում է կանանց ավելի մեծ ներգրավվածություն ինչպես քաղաքականության, այնպես էլ բիզնեսի և հասարակական կառույցների ղեկավար պաշտոններում: Կանայք ավելի մեծ թվով սկսում են մասնակցել որոշումների կայացման գործընթացներին, ինչը նպաստում է գենդերային հավասարության հաստատմանը: Այս տեղաշարժերը ցույց են տալիս, որ հասարակական ընկալումները մասկուլինության և ֆեմինինության վերաբերյալ փոխվում են՝ հնարավորություն ընձեռելով կանանց ավելի ակտիվ դերակատարություն ունենալ հասարակության տարբեր ոլորտներում:

4. Սոցիալական փոփոխություններ

Սոցիալական փոփոխությունները, ինչպիսիք են՝ միասեռ

ամուսնությունները և գենդերային աճող հավասարությունը, հանգեցրել են մասկուլինության և ֆեմինինության վերագնահատմանը ընտանիքի համատեքստում: Այս տեղաշարժերը ընդլայնել են բուն ընտանիքի հայեցակարգը և ակներև է, որ ժամանակակից ընտանիքներն ավելի բազմազան են և ներառական:

5. Գենդերային ընկալումը և դաստիարակության ոճերը.

Գենդերային նոր ակնկալիքներն նպաստում են ծնողավարման նոր մոտեցումների և ոճերի ի հայտ գալուն: Այդուհանդերձ, պետք է նշել, որ մայրերից հաճախ դեռ ակնկալվում է, որ հիմնական խնամակալները լինեն:

Եզրակացություն

Վերլուծելով և համեմատելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում մասկուլինության և ֆեմինինության ընկալման առանձնահատկությունները՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ սոցիալ-մշակութային, տնտեսական ազդեցություններով, գիտատեխնիկական առաջընթացով, պատրիարխալ տիպի ընտանեկան մոդելից անցմամբ դեպի «միջուկային» մոդելի և ժամանակակից հասարակությունում կնոջ դերի և կարգավիճակի ընկալման փոփոխմամբ՝ վերափոխվեցին նաև մասկուլինության և ֆեմինինության վերաբերյալ պատկերացումները: Մասնավորապես՝ այն հանգեցրեց ընտանեկան դերերի փոփոխման, հոր կերպարի վերաիմաստավորման՝ հուզական ներգրավվածության շեշտադրման, կանանց ներգրավվածության աճի ղեկավար պաշտոններում և հասարակական կյանքում, մի շարք սոցիալ-հասարակական փոփոխությունների, գենդերային ընկալման և դաստիարակության նոր ոճերի ձևավորման: Ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս, որ մասկուլինության և ֆեմինինության ընկալումները շարունակաբար փոփոխվում են՝ կախված հասարակության սոցիալական և մշակութային վերափոխումներից: Զարգացած հասարակությունը, կրթական մակարդակի բարձրացումը և սոցիալական շարժումների ազդեցությունը նպաստում են գենդերային ավելի հավասարակշռված մոտեցումների ձևավորմանը: Եվ մասկուլինությունը, և՛ ֆեմինինությունը ավելի ու ավելի են դիտվում որպես սոցիալապես կառուցված և հարմարվողական, այլ ոչ թե բացառապես կենսաբանորեն պայմանավորված: Այս տեղաշարժը նպաստում է անհատականության ազատությանը և ներառականությանը: Վերջիններս էլ առողջ և գիտակից հասարակության ձևավորման կարևոր նախադրյալներ են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վարդանյան Ն. Տ., Գենդերային նույնականության հասկացության ձևավորման վերլուծությունը. Արդի հոգեբանություն, 1(2), 2018, էջ 126-130:
2. Бендас Т. В. Гендерная психология: Учебное пособие. – СПб.: Питер, 2006. – 431 с.
3. Геодакян В.А. Теория дифференциации полов в проблемах развития человека. – В кн. Человек в системе наук. М., 1989, с. 171-189
4. Майерс Д. Психология. – Минск: «Попурри», 2008. – 848 с
5. Флотская Н.Ю. Психология половой идентичности: учеб. пособие. Архангельск, 2009. с. 37
6. Хорни К. Психология женщины. Самоанализ. – СПб.: Питер, 2012. – 320 с.

7. Чодороу Н. Воспроизводство материнства: Психоанализ и социологиян гендера. – М.: “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2006. – 496 с
8. Connor S., Edvardsson K., Fisher Ch., and Spelten E., Perceptions and Interpretation of Contemporary Masculinities in Western Culture: A Systematic Review.. American Journal of Men’s Health, 2021, p. 17. https://doi.org/10.1177/15579883211061
9. Hofstede, Geert and Associates. Masculinity and Femininity. The Taboo Dimension of National Cultures. Sage Publications, 1998, p. 229
10. Maccoby E. E. and Jacklin C. N. The Psychology of Sex Differences. Stanford: Stanford University Press. 1974, p. 416.
11. Morawski J. G. “The Troubled Quest for Masculinity, Femininity, and Androgyny.” In Phillip Shaver and Clyde Hendrick (Eds.), Sex and Gender. Newbury Park: Sage. 1987, pp. 44–69.
12. Spence J. T. “Masculinity, Femininity, and Gender-Related Traits: A Conceptual Analysis and Critique of Current Research.” In B. A. Maher and W. Maher (Eds.), Progress in Experimental Research. San Diego: Academic Press. 1984, pp. 2–97.
13. Spence J. T. and Helmreich R. L. Masculinity and Femininity: Their Psychological Dimensions, Correlates, and Antecedents. Austin: University of Texas Press. 1978, p. 297.
14. Spence J. T. and Sawin L. L. “Images of Masculinity and Femininity: A Reconceptualisation in Virginia E. O’Leary, Rhoda Kesler Unger, and Barbara Strudler Wallston (Eds.), Women, Gender, and Social Psychology. Hillsdale, NJ: Lawrence Erlbaum. 1985. pp. 35–66.
15. Stets, J. E., & Burke, P. J. Femininity/Masculinity. In E. F. Borgatta & R. J. V. Montgomery (Eds.), Encyclopedia of Sociology, Revised Edition, New York, Macmillan. pp. 997–1005. Available at: https://www.stevenlaurie.com/wp-content/uploads/2012/01/Masculinity-and-Femininity.pdf (26.02.2025)
16. Terman L. M. and Catherine C. M.. Sex and Personality. New York: McGraw-Hill. 1936, p. 600.
17. Terman L. M. and Miles C. C. Sex and Personality. New York: McGraw-Hill, 1936.
18. Исследование маскулинности-фемининности личности http://psylist.net/praktikum/49.htm (14.03.2025)
19. Маскулинность и фемининность: от бинарной оппозиции к целостной человечности https://zn.ua/SOCIUM/maskulinnost_i_femininnost_ot_binarnoy_oppozitsii_k_tselostnoy_chelovechnosti.html (17.03.2025)
20. The Meaning of Masculinities. https://www.ndi.org/sites/default/files.pdf (27.03.2025)